ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը
Բուլղարիայի Հանրապետություն (Սոֆիա)
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Դավիթ Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Սոֆիա, Բուլղարիայի Հանրապետություն, նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը, 2021 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   Բուլղարիայի Հանրապետության կառավարություն և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ

5. **Գործուղման նպատակը**.
   Մասնակցություն «Եվրոպայի ժողովրդագրական ապագայի ձևավորում» խորագրով նախարարական համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.** Համաժողովը անց է կացվել 2021թ. դեկտեմբերի 1-ից 2-ը, որի ընթացքում քննարկվել են ժողովրդագրությանն առնչվող մի շարք թեմաներ և հարցեր պանելային քննարկումների ձևաչափով՝ ժողովրդագրական ճկունության և կայուն զարգացման համատեքստում: Քննարկվել են օրակարգային այնպիսի հարցեր, ինչպիսիք են.
   1. Ժողովրդավարություն և ժողովրդագրություն,
   2. Ծերացող հասարակության ներուժի օգտագործում,
   3. Ծնելիությունը՝ թվերից այն կողմ,
   4. Գենդերային հավասարություն և ընտանիքին ուղղված քաղաքականություն,
   5. Երիտասարդության ձգտումները, անհանգստությունները և վերաբերմունքը,
   6. Գյուղական ինտեգրացիա, ընտրություն և ապագա,
   7. Սոցիալական քաղաքականության ֆինանսավորումը ժողովրդագրական նոր իրականության մեջ,
   8. Ժողովրդագրական արագ փոփոխությունների պայմաններում հասարակությունների բարգավաճման ուղիները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** «Գյուղական ինտեգրացիա. ընտրություն և ապագա» թեմայի պանելային քննարկման շրջանակներում մասնակցեց նաև ՀՀ պատվիրակությունը, և որպես բանախոս հանդես եկավ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը՝ առցանց ռեժիմով: Ներկայացվեց Հայաստանի Հանրապետությունում գյուղական բնակավայրերում իրականացվող ծրագրերը,

գյուղերում ծնելիության ցուցանիշի անկմանը հակազդող միջոցառումները և անելիքները, ինչպես նաև վարողի հարցին ի պատասխան ներկայացվեց ՀՀ գյուղական համայնքներում թվայնացման և բնակչությանը մատուցվող պետական և համայնքային ծառայությունների հասանելիությանը և ընդլայմանն ուղղությամբ կատարվող աշխատանքները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.** Համաժողովի ընթացքում աշխատանքային կապեր և հետագայում համագործակցության նպատակով ծանոթություններ են տեղի ունեցել Համաժողովի մասնակիցների, այդ թվում՝ այլ պետությունների սոցիալական ոլորտը համակարգող պաշտոնյաների և ՄԱԿ-ի հետ համագործակցող փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ «Ժողովրդագրության ռազմավարություն» փաստաթղթի մշակման շրջանակներում բանավոր պայմանավորվածություններ ձեռք բերվեցին ժողովրդագրության ոլորտում հեղինակավոր փորձագետների հետ՝ փաստաթղթի մշակման աշխատանքներին վերջիններիս ներգրավելու շուրջ: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի առաջարկով առաջիկայում կներկայացվեն առաջարկներ փորձագետների մասով:

12/9/2021

X

ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:** Signed by: KHACHATRYAN DAVIT 2401820493

07.12.2021թ.